# Ալեքսանդր Ծատուրյան

## Ալեկոծ ծով

Ասա՛ ինձ, ա՛յ ծով, ի՞նչ ես վրդովված,
Այդպես աղմկում դու օր և գիշեր.
Եվ խոր հատակից՝ մռայլ, պղտորած,
Եզերք թավալում գոռ-գոռ ալիքներ:

Արդյոք քո անբավ, անմեղ զոհերիդ
Դառն հիշատա՞կն է քո կուրծքը հուզում,
Թե՛ այդ մռնչյունն անկուշտ ջրերդ
Կյանքից նորանոր զոհեր է ուզում...

Նստած եմ ափիդ ես տխուր, տրտում
Եվ բյո՛ւր հարցեր են ծնվում իմ սրտում.
Բայց դու հուզվում ես, հուզվում, կատաղում
Ե՛վ իմ հարցերն էլ քո կրծքում թաղում...

1896, օգոստոս

Գուրգուֆ